ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ԱԼԵՔՍԱՆԴՐ ՎՈՐՈՆԻՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 305-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Ալեքսանդր Վորոնինի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճելու մասին առաջարկությունը՝ **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Ալեքսանդր Վորոնինի (այսուհետ նաև՝ Դիմող, ներկայացուցիչ՝ փաստաբան Լուսինե Գրիգորյան) դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2026 թվականի հունիսի 24-ին[1]:

Դիմողը Սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումում խնդրել է.

«(...) հաշվի առնելով Սահմանադրության 1-ին, 3-րդ և 80-րդ հոդվածների պահանջները՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածին դատական ատյանների կողմից տրված մեկնաբանությունը ճանաչել Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի, 60-րդ հոդվածի 1-ի, 61-րդ հոդվածի 1-ին մասի և 63-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող և անվավեր՝ այնքանով, որքանով դատարանի կողմից օտարերկրյա դատական ակտի կատարման ապահովման նպատակով գույքի վրա արգելանք կիրառելու մասին որոշման օրինական ուժի մեջ

[1] Սույն դիմումը Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի 2026 թվականի հունիսի 25-ի թիվ Ա/0847-2026 գրությամբ վերադարձվել է Դիմողին՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 25-րդ հոդվածով սահմանված պահանջին համապատասխանեցնելու և վերստին ներկայացնելու նպատակով: Համապատասխանեցված դիմումը վերջինիս կողմից Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2026 թվականի հուլիսի 1-ին:

մտնելն ինքնին չի դիտվում որպես գույքի տնօրինման իրավունքի սահմանափակում, քանի դեռ այդ արգելանքը պետական գրանցմամբ չի ամրագրվել»:

2. **ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը** (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ին:

Օրենսգրքի՝ ***«Օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքի անվավերությունը»*** վերտառությամբ 305-րդ հոդվածը սահմանում է. *«Օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ»*:

Վերոնշյալ դրույթը որևէ փոփոխության և/կամ լրացման չի ենթարկվել:

3. Գործի դատավարական նախապատմությունը

3.1. Ալեքսանդր Վորոնինի ներկայացուցիչը դիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով ճանաչել Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքի Արբիտրաժային դատարանի 23.06.2014 թ. թիվ Ա40-35386/14 որոշումը և թույլատրել կատարման 16 400 000 ռուբլի գումարի չափով:

03.11.2021 թ. որոշմամբ ներկայացված դիմումն ընդունվել է վարույթ **(թիվ ԵԴ/0097/16/21 դատական գործ):**

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ օտարերկրյա դատական ակտի կատարման ապահովման միջոց կիրառելու միջնորդությունը քննության առնելու մասին որոշմամբ **03.11.2021 թ.** որոշվել է.

«Դիմումատու Ալեքսանդր Վլադիմիրի Վորոնինի ներկայացուցիչ Լուսինե Գրիգորյանի կողմից ներկայացված միջնորդությունը՝ օտարերկրյա ակտի կատարումն ապահովելու մասին բավարարել մասնակի:

Օտարերկրյա դատական ակտի կատարումն ապահովելու համար՝ 16.400.000 ՌԴ ռուբլուն համարժեք ՀՀ դրամի չափով արգելանք դնել պարտապան Արմեն Միխայիլի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի և դրամական միջոցների վրա:

Դիմումատու Ալեքսանդր Վլադիմիրի Վորոնինի ներկայացուցիչ Լուսինե Գրիգորյանի միջնորդությունը մնացած մասով մերժել:

Որոշման կատարումը հանձնարարել ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը:

Որոշումը ենթակա է անհապաղ կատարման:

(...)»:

03.12.2021 թ. Արմեն Միխայիլի Գրիգորյանի և Մարատ Մարատի Դանիելյանի միջև կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որով Արմեն Գրիգորյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող ք. Երևան, Կենտրոն, Զորափի փողոցի 40 շենքի 68 բնակարանն օտարել է Մարատ Դանիելյանին:

Վերոնշյալ բնակարանի նկատմամբ Մարատ Մարատի Դանիելյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը կատարվել է **09.12.2021 թ.**:

*Թիվ ԵԴ/0097/16/21 դատական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ օտարերկրյա դատական ակտի կատարման ապահովման միջոց կիրառելու միջնորդությունը քննության առնելու մասին **03.11.2021 թ.** որոշմամբ օտարերկրյա դատական ակտի կատարումն ապահովելու համար՝ 16.400.000 ՌԴ ռուբլուն համարժեք ՀՀ դրամի չափով պարտապան Արմեն Միխայիլի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի և դրամական միջոցների վրա արգելանք դնելու վերաբերյալ կատարողական թերթը էլեկտրոնային եղանակով ուղարկվել է **09.12.2021 թ.:***

3.2. Ալեքսանդր Վլադիմիրի Վորոնինի ներկայացուցչի կողմից 31.01.2022 թ. հայցադիմում է ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Մարատ Մարատի Դանիելյանի և երրորդ անձ Արմեն Միխայիլի

Գրիգորյանի՝ 03.12.2021 թ. անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 26.05.2022 թ. որոշմամբ բավարարվել է հայցվոր Ալեքսանդր Վլադիմիրի Վորոնինի ներկայացուցչի միջնորդությունը՝ Արմեն Միխաիլի Գրիգորյանին երրորդ անձանց կազմից հանելու և վերջինիս՝ գործով որպես նոր պատասխանող ներգրավելու վերաբերյալ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 02.08.2023 թ. որոշմամբ Երևանի քաղաքապետարանը ներգրավվել է որպես մահացած դատավարության մասնակից՝ պատասխանող Արմեն Գրիգորյանի իրավահաջորդ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, քննելով թիվ ԵԴ/4648/02/22 քաղաքացիական գործն ըստ հայցի Ալեքսանդր Վլադիմիրի Վորոնինի ընդդեմ Մարատ Մարատի Դանիելյանի և Արմեն Միխայիլի Գրիգորյանի իրավահաջորդ Երևանի քաղաքապետարանի՝ 03.12.2021 թ. անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին, 28.11.2024 թ. վճռել է.

«Ալեքսանդր Վլադիմիրի Վորոնինի հայցն ընդդեմ Մարատ Մարատի Դանիելյանի և Արմեն Միխայիլի Գրիգորյանի իրավահաջորդ Երևանի քաղաքապետարանի՝ Արմեն Գրիգորյանի և Մարատ Մարատի Դանիելյանի միջև ք.Երևան, Կենտրոն, Զորափի փողոց 40շենք 68 բնակարանի նկատմամբ 03.12.2021թ. կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

(...)»:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանը, քննելով թիվ ԵԴ/4648/02/22 քաղաքացիական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 28.11.2024 թ. վճռի դեմ Ալեքսանդր Վլադիմիրի Վորոնինի անունից ներկայացված վերաքննիչ բողոքը, 04.09.2025 թ. որոշել է.

«1. Ալեքսանդր Վորոնինի վերաքննիչ բողոքը մերժել: ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի ԵԴ/4648/02/22 քաղաքացիական գործով 28.11.2024 թվականի վճիռը թողնել անփոփոխ:

(...)»:

Վճռաբեկ դատարանը, քննելով թիվ ԵԴ/4648/02/22 քաղաքացիական գործով Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.09.2025 թ. որոշման դեմ Ալեքսանդր Վորոնինի բերած վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը, 24.12.2025 թ. որոշել է.

«1. Թիվ ԵԴ/4648/02/22 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.09.2025 թվականի որոշման դեմ Ալեքսանդր Վորոնինի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել:

(...)»:

4. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը, ներկայացնելով բարձրացված հարցադրումների կապակցությամբ համապատասխան իրավակարգավորումները, վկայակոչելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիան, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ինչպես նաև Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի վերաբերելի իրավական դիրքորոշումները, գտնում է, որ վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության արդյունքում խախտվել է իր սեփականության իրավունքը, «(...) քանի որ նրա օրինական պահանջից բխող գույքային ակնկալիքը՝ որպես պաշտպանվող իրավական շահ, փաստացի զրկվել է իրականացման արդյունավետ հնարավորությունից՝ հակառակ այն իրավական երաշխիքներին, որոնք բխում են ինչպես ազգային սահմանադրական կարգավորումներից, այնպես էլ միջազգային դատական պրակտիկայից»:

Դիմողը պնդում է, որ «(...) դատական ակտի պարտադիրությունը գործում է անկախ այն հանգամանքից՝ դատական ակտից բխող սահմանափակումը

ենթարկվել է պետական գրանցման, թե ոչ, քանի որ իրավական ուժը ծագում է հենց օրինական ուժի մեջ մտնելու պահից: Հետևաբար, դատական ակտով սահմանված արգելանքը կամ այլ սահմանափակումները պարտադիր են բոլորի համար՝ անկախ դրանց պետական գրանցման տեխնիկական փաստից, իսկ հասցեատերերը պարտավոր են պահպանել և կատարել այդ ակտի պահանջները»:

Դիմողը գտնում է, որ «(...) չնայած բազմիցս կարևորվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի դերն ու պարտադիր բնույթը, փաստացի իրավակիրառ պրակտիկայում ձևավորվել է մի իրավիճակ, երբ այդ ակտի պահանջներին հակասող գործարքները չեն ճանաչվում անվավեր, ինչը հանգեցնում է մի շարք հիմնարար խնդիրների:

Առաջին հերթին՝ դատական ակտը դառնում է ձևական փաստաթուղթ, որի կատարումը կախվածության մեջ է դրվում տեխնիկական կամ վարչական գործողություններից: Արդյունքում խաթարվում է դատական ակտի պարտադիրության սահմանադրական սկզբունքը:

Երկրորդ՝ նման մոտեցումը էականորեն թուլացնում է դատական պաշտպանության արդյունավետությունը, քանի որ անձը, նույնիսկ ստանալով իր օգտին դատական ակտ, չի կարող վստահ լինել, որ դրան հակասող գործողությունները կհանգեցնեն իրավական հետևանքների, այդ թվում՝ գործարքի անվավերության:

Երրորդ՝ ձևավորվում է իրավական անորոշություն, երբ մի կողմից գոյություն ունի ուժի մեջ մտած դատական ակտով սահմանված արգելք, իսկ մյուս կողմից՝ այդ արգելքը անտեսվում է քաղաքացիական շրջանառության մեջ:

Չորրորդ՝ Օրենսգրքի 305-րդ հոդվածի նման մեկնաբանությունը հանգեցնում է դրա բովանդակության նեղացման, քանի որ գործնականում դատական ակտը դուրս է մղվում «այլ իրավական ակտերի» շրջանակից, որոնք կարող են հիմք հանդիսանալ գործարքի անվավերության համար:

Հինգերորդ՝ նման իրավակիրառ մոտեցման պայմաններում փաստացի արժեզրկվում է հայցի ապահովման ինստիտուտը, քանի որ դատական ակտով

կիրառված ապահովման միջոցը չի ապահովում իր հիմնական նպատակը և չի կանխում պարտապանի անբարեխիղճ վարքագիծը»:

Դիմողի պնդմամբ՝ դատարանների կողմից քննարկվող նորմին տրված գնահատականը հակադրվում է իրավունքի գերակայության կարևոր բաղադրատարր հանդիսացող և Սահմանադրությամբ ուղղակիորեն նախատեսված իր արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունքներին:

Դիմողը գտնում է, որ «(...) վիճարկվող իրավանորմին տրված մեկնաբանությունը բավարար չափով և հստակությամբ չի ծառայում արդար դատաքննությանը, քանի որ այն չի ապահովում իրավական որոշակիության և կանխատեսելիության պահանջները՝ թույլ տալով տարբեր և հակասական մեկնաբանություններ դատական ակտի իրավաբանական ուժի և դրա հետևանքների վերաբերյալ:

(...)

(...) գույքի նկատմամբ իրավունքի սահմանափակման հիմքը դատական ակտն է, որի ընդունման հետ էլ պետք է կապել արգելքի առկայությունը, իսկ պետական գրանցումը՝ դատական ակտի հիման վրա արդեն իսկ կիրառված սահմանափակման ճանաչումը, դրա երաշխավորում ու պաշտպանումն է պետության կողմից: Ուստի գույքի նկատմամբ իրավունքի սահմանափակումն առկա է համապատասխան դատական ակտի ընդունման և ոչ թե, այդ սահմանափակումը պետական գրանցման ենթարկելու պահից, ինչից էլ հետևում է, որ եթե գործարքը կնքվել է գույքի նկատմամբ իրավունքը սահմանափակող դատական ակտի առկայության պայմաններում, ապա անկախ այդպիսի սահմանափակման պետական գրանցման պահից, գործարքը՝ պայմանագիրը, Օրենսգրքի 305-րդ հոդվածի ուժով պետք է ճանաչվի անվավեր»:

Ամփոփելով իր դիրքորոշումները՝ Դիմողը խնդրում է. «(...) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածին դատական ատյանների կողմից տրված մեկնաբանությունը ճանաչել Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի, 60-րդ հոդվածի 1-ի, 61-րդ հոդվածի 1-ին մասի և 63-րդ հոդվածի 1-ին մասի

պահանջներին հակասող և անվավեր՝ այնքանով, որքանով դատարանի կողմից օտարերկրյա դատական ակտի կատարման ապահովման նպատակով գույքի վրա արգելանք կիրառելու մասին որոշման օրինական ուժի մեջ մտնելն ինքնին չի դիտվում որպես գույքի տնօրինման իրավունքի սահմանափակում, քանի դեռ այդ արգելանքը պետական գրանցմամբ չի ամրագրվել»:

5. Պատասխանողի դիրքորոշումները

Ազգային ժողովը (այսուհետ նաև՝ Պատասխանող), ներկայացնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի վերաբերելի իրավական դիրքորոշումները և համապատասխան օրենսդրական կարգավորումները, նշում է, որ սեփականության իրավունքի սահմանափակման համաչափությունը չի կարող կասկած հարուցել դրա պիտանիության և անհրաժեշտության հարցում, եթե միջամտության հիմքում դրված է հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակը:

Պատասխանողը նշում է, որ գույքի նկատմամբ իրավունքի սահմանափակման հիմքը դատական ակտն է, որի ընդունման հետ էլ պետք է կապել համապատասխան արգելքի առկայությունը, իսկ պետական գրանցումը դատական ակտի հիման վրա արդեն իսկ կիրառված սահմանափակման ճանաչումը, դրա երաշխավորումն ու պաշտպանումն է պետության կողմից, ուստի՝ գույքի նկատմամբ իրավունքի սահմանափակումն առկա է համապատասխան դատական ակտի ընդունման և ոչ թե այդ սահմանափակումը պետական գրանցման ենթարկելու պահից:

Պատասխանողը գտնում է, որ պետական գրանցման բացակայությունը չի կարող ինքնին հանգեցնել դատարանի կողմից սահմանված սահմանափակման իրավաբանական գոյության ժխտմանը: Հակառակ մեկնաբանության դեպքում դատարանի կողմից սահմանված սահմանափակման առաջացումը փաստացի կախվածության մեջ կդրվեր պետական գրանցում իրականացնող մարմնի կողմից համապատասխան գրառում կատարելու հանգամանքից: Այդպիսի մոտեցման

պայմաններում վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը փաստացի կդառնար դատական ակտով սահմանված իրավական հետևանքի առաջացման նախապայման, ինչը չէր համապատասխանի դատական ակտի պարտադիրության սկզբունքին և դատական պաշտպանության արդյունավետության պահանջին:

Պատասխանողն ընդգծում է, որ դատական ակտով նախատեսված սահմանափակման կիրառումը դրա պետական գրանցման ենթարկելու պահով պայմանավորելու դեպքում կորցնում է իր գործնական նշանակությունը և դառնում ինքնանպատակ:

Պատասխանողը պնդում է, որ մինչև անշարժ գույքի օտարման գործարքի կնքումը դատական ակտով կամ օրենքի ուժով արդեն իսկ սահմանված էր տվյալ գույքի օտարման արգելք, ուստի՝ հետագա գործարքի իրավաչափությունը չի կարող գնահատվել այն տրամաբանությամբ, որ գործարքի կնքման պահին գույքի նկատմամբ պետական գրանցման ենթարկված որևէ սահմանափակում գոյություն չուներ: Ընդհակառակը՝ գործարքի իրավաչափությունը պետք է գնահատվի ոչ միայն գրանցված սահմանափակումների, այլ նաև դատական ակտով կամ օրենքով սահմանված սահմանափակումների համատեքստում:

Պատասխանողը եզրահանգում է, որ դատարանի կողմից գույքի օտարման արգելք սահմանելու մասին որոշման առկայությունը, անկախ այդ սահմանափակման պետական գրանցման փաստից, վկայում է գործարքի կնքման պահին գույքի օտարման նկատմամբ իրավական արգելքի գոյության մասին, հետևաբար՝ դատարանի կողմից գույքի օտարման արգելք սահմանելու մասին որոշման առկայության և պետական գրանցման բացակայության պայմաններում տվյալ գույքի օտարման գործարքն իրավաչափ ճանաչելու մեկնաբանությունը չի բխում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի կարգավորումներից և հակասում է արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրաիրավական պահանջին:

Պատասխանողը գտնում է, որ պետական գրանցման բացակայությունը չի կարող օրինականացնել դատարանի կողմից արգելված գործարքը, քանի որ

հակառակ մոտեցումը կչեզոքացնի դատական ակտի պարտադիրությունը և կխաթարի արդյունավետ դատական պաշտպանության երաշխիքը:

Պատասխանողը գտնում է, որ տվյալ նորմին դատարանի կողմից այլ մեկնաբանություն տալու հանգամանքը չի կարող ինքնին վկայել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը հակասելու մասին: Նորմի սահմանադրականության հարցը չի կարող պայմանավորվել դրա հնարավոր ոչ ճիշտ կամ ձևավորված դատական պրակտիկային չհամապատասխանող մեկնաբանությամբ, քանի դեռ առկա է դրա՝ Սահմանադրությանը համապատասխան մեկնաբանման և կիրառման հնարավորություն:

Ամփոփելով իր դիրքորոշումները՝ Պատասխանողը խնդրում է. ««Ալեքսանդր Վորոնինի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ընդունել որոշում վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին»:

6. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

Ելնելով դիմումի և դատական ակտերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Սահմանադրական օրենք) 29-րդ և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **սույն գործի վարույթը ենթակա է կարճման**՝ ներքոնշյալ հիմքերով և պատճառաբանություններով.

6.1. Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ***ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև***

համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական վերոնշյալ դրույթն ամրագրվել է նաև Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով, որը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան:

Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ***ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:***

Սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ***Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են նույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր:***

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում նույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված ***այլ դեպքերում***:

Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և ***հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և***

ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Նույն օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումներով գործի քննությունը, ի թիվս այլնի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն ***ակնհայտ անհիմն է***:

Սահմանադրական դատարանը 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ ներկայացվող դիմումների հիմնավորվածության վերաբերյալ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(...) դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Նշված պահանջին համապատասխան՝ դիմողը պետք է նաև դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր՝ ձեռնպահ մնալով քաղաքական կամ ոչ իրավական բնույթի հարցադրումներից ու արտահայտություններից»*:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անհատական դիմումի շրջանակում նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը վիճարկելու պարագայում **անհրաժեշտ է բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, որ վիճարկվող դրույթը (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը) հանգեցրել է (են) Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության խախտման:**

Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումների հիմնավորված լինելու պահանջը **չի կարող պահպանված համարվել բոլոր այն դեպքերում, երբ դիմողը պարզապես հղում է կատարում Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության՝ առանց ներկայացնելու վիճարկվող օրինադրույթի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության) և տվյալ հիմնական իրավունքի**

և (կամ) ազատության ենթադրյալ խախտման փաստի միջև անմիջական պատճառահետևանքային կապի առկայության բավարար հիմնավորումներ:

6.2. Վերոգրյալի լույսի ներքո անդրադառնալով ներկայացված դիմումին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է հետևյալը.

Դիմողը պնդում է, որ Օրենսգրքի վիճարկվող՝ 305-րդ հոդվածին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության արդյունքում անհիմն կերպով զրկվել է պարտապանի գույքի հաշվին օտարերկրյա դատական ակտի կատարումն ապահովելու հնարավորությունից, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր՝ Սահմանադրության 60, 61 և 63-րդ հոդվածներով երաշխավորված՝ սեփականության, արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների խախտման:

Սահմանադրական դատարանը հայտնում է, որ **թիվ ԵԴ/4648/02/22** քաղաքացիական գործով Դիմողը բարձրացրել է **անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին պահանջ՝ միաժամանակ պահանջի հիմքում դնելով թիվ ԵԴ/0097/16/21 դատական գործով** Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ օտարերկրյա դատական ակտի կատարման ապահովման միջոց կիրառելու միջնորդությունը քննության առնելու մասին 03.11.2021 թ. որոշմամբ խնդրո առարկա անշարժ գույքի նկատմամբ արգելանք կիրառված լինելու հանգամանքը՝ **պնդելով,** որ գործարքն անվավեր ճանաչելու իրավական հիմքը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածն է, ըստ որի՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ**:**

Այս առնչությամբ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, քննելով թիվ ԵԴ/4648/02/22 քաղաքացիական գործն ըստ հայցի Ալեքսանդր Վլադիմիրի Վորոնինի ընդդեմ Մարատ Մարատի Դանիելյանի և Արմեն Միխայիլի Գրիգորյանի իրավահաջորդ Երևանի քաղաքապետարանի՝ 03.12.2021 թ. անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրն

անվավեր ճանաչելու պահանջի մասին, **28.11.2024 թ.** վճռով ներկայացված ***հայցը մերժել է՝*** արձանագրելով հետևյալը.

«Հայցվորի կողմից նշված փաստական և իրավական հիմքերով չի հիմնավորվում 03.12.2021 թ. Արմեն Գրիգորյանի և Մարատ Մարատի Դանիելյանի միջև ք. Երևան, Կենտրոն, Զորափի փողոց 40շենք 68 բնակարանի նկատմամբ կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածով սահմանված Օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր ճանաչելու համար, իսկ գործարքը կնքելու պահին բնակարանի նկատմամբ առկա չէ եղել որևէ սահմանափակում:

Հետևաբար հայցվորի կողմից չեն ներկայացվել ապացույցներ հիմնավորելու համար այն հանգամանքը, որ կնքված գործարքը չի համապատասխանում Օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին»:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանը, քննելով **թիվ ԵԴ/4648/02/22** քաղաքացիական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 28.11.2024 թ. վճռի դեմ Ալեքսանդր Վլադիմիրի Վորոնինի անունից ներկայացված վերաքննիչ բողոքը, **04.09.2025 թ.** որոշել է *վերաքննիչ բողոքը մերժել և Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 28.11.2024 թ. վճիռը թողնել անփոփոխ՝* արձանագրելով հետևյալը.

«(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն դեպքում բողոքաբերի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց, որի հետազոտման և գնահատման արդյունքում կարելի էր հաստատված համարել հայցվորի ապացուցման բեռը կազմող վերոնշյալ փաստը՝ մասնավորապես այն, որ Արմեն Գրիգորյանն առհասարակ տեղյակ է եղել դատական ակտի, կամ սահմանափակումների վերաբերյալ, որպիսի իրավաչափ եզրահանգման էլ եկել նաև Դատարանը՝ կիրառելով նշված փաստի չհաստատման բացասական հետևանքները: Ավելին՝ սույն գործով բացակայում է որևէ ապացույց այն մասին, որ 03.12.2021 թվականին Արմեն Գրիգորյանին պատկանող գույքի, այդ թվում՝ ք.Երևան, Կենտրոն, Զորափի

փողոց, 40 շենք, 68 բնակարանի վրա Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 03.11.2021 թվականի որոշմամբ դրված էր արգելանք: Այլ կերպ ասած բացակայում է ապացույց՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 03.11.2021 թվականի որոշումը 03.12.2021 թվականի դրությամբ կատարված լինելու վերաբերյալ: Ինչից էլ հետևում է, Արմեն Գրիգորյանը վեճի առարկա անշարժ գույքի նկատմամբ արգելանքի բացակայության պայմաններում զրկված չէր օտարելու իրեն պատկանող գույքը, հետևաբար դատական ակտի պարտադիրության կանոնի խախտման վերաբերյալ խոսք լինել չի կարող»:

Դիմումի, ինչպես նաև թիվ ԵԴ/0097/16/21 ու թիվ ԵԴ/4648/02/22 գործերով կայացված դատական ակտերի համակողմանի ուսումնասիրության արդյունքում Սահմանադրական դատարանը արձանագրում է, որ **Դիմողը չի ներկայացրել խնդրո առարկա դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության ենթադրյալ հակասահմանադրականությունը փաստող բավարար հիմնավորումներ, որոնք հիմք կտային վերջինիս պնդելու, որ իր համար առաջացած անբարենպաստ իրավական հետևանքները ծագել են հենց վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված ենթադրյալ հակասահմանադրական մեկնաբանության արդյունքում՝ ներքոշարադրյալ հիմնավորումներով:**

6.3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ **«Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման կատարումը»** վերտառությամբ 132-րդ հոդվածը սահմանում է.

«1. Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման հարկադիր կատարման դիմումը դատարանն անհապաղ ուղարկում է հարկադիր կատարման:

2. Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին դատարանի որոշումը կատարվում է անհապաղ՝ «Կատարողական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»:

Այսպիսով, վերոշարադրյալ իրավանորմով սահմանված է հստակ և պարտադիր ընթացակարգ, ըստ որի՝ **հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման հարկադիր կատարման դիմումը դատարանը պետք է**

անհապաղ ուղարկի հարկադիր կատարման, իսկ համապատասխան որոշումը ենթակա է անհապաղ կատարման: Հետևաբար՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշմամբ դատարանի դատավարական վարքագիծը չի սահմանափակվում միայն համապատասխան դատական ակտի կայացմամբ, այլ ներառում է նաև դրա՝ օրենքով նախատեսված անհապաղ կատարման ապահովմանը միտված անհրաժեշտ գործողությունների պատշաճ և ժամանակին իրականացումը:

Մինչդեռ սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/0097/16/21 դատական գործով **03.11.2021 թ.** կայացված՝ **անհապաղ կատարման ենթակա դատական ակտը** հարկադիր կատարման է ուղարկվել դրա կայացումից ավելի քան մեկ ամիս անց՝ **09.12.2021 թ.**, *հետևաբար՝ հայցի ապահովման կիրառման փաստը երրորդ անձանց համար հասանելի, ուստիև՝ իրավական հետևանքներ առաջացնող փաստ չի դարձել*:

Ավելին, հենց **այդ ժամանակահատվածում** (ըստ գործի նյութերի՝ 03.12.2021 թ.) գույքն օտարվել է, իսկ գործարքի պետական գրանցման գործընթացի շրջանակներում համապատասխան հարցումների արդյունքում գույքի նկատմամբ արգելանքի առկայություն չի արձանագրվել, որպիսի տեղեկատվությունն արտացոլված է հիշատակված քաղաքացիական գործով կայացված դատական ակտերով:

Նշված իրողությունում առուվաճառքի գործարքի անվավերության հարցը և դատարանի կողմից հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը **ժամանակին կատարման չուղարկելու հետևանքով** անձի հնարավոր իրավունքների խախտման հարցը **միմյանցից պետք է հստակ տարանջատել**:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ քննարկվող դեպքում Դիմողի համար առաջացած ***բացասական իրավական հետևանքները պայմանավորված են ոչ թե վիճարկվող իրավակարգավորման կամ դրան իրավակիրառ պրակտիկայում տրված ենթադրյալ հակասահմանադրական մեկնաբանության հետևանքով, այլ*** **Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության**

դատարանի կողմից օրենսդրորեն սահմանված՝ անհապաղ կատարման ենթակա դատական ակտը ժամանակին հարկադիր կատարման չուղարկելու, այն է՝ օրենքով սահմանված կատարողական վարույթի պահանջների անտեսման, մասնավորապես՝ ավելի քան մեկ ամիս անց համապատասխան որոշումը կատարման ուղարկելու հանգամանքով:

Նման պայմաններում Սահմանադրական դատարանը գտնում է, որ Դիմողի կողմից բարձրացված հարցադրումն առ այն, որ հիշատակված դրույթը՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, հանգեցնում է իր՝ Սահմանադրությամբ երաշխավորված՝ սեփականության իրավունքի, արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների խախտման, **ակնհայտ անհիմն է**:

6.4. Ինչ վերաբերում է Դիմողի այն փաստարկին, ըստ որի՝ *գույքի նկատմամբ իրավունքի սահմանափակումն առկա է համապատասխան դատական ակտի* ***ընդունման և ոչ թե այդ սահմանափակումը պետական գրանցման ենթարկելու պահից****, ինչից էլ հետևում է, որ եթե գործարքը կնքվել է գույքի նկատմամբ իրավունքը սահմանափակող դատական ակտի առկայության պայմաններում, ապա անկախ այդպիսի սահմանափակման պետական գրանցման պահից, գործարքը՝ պայմանագիրը, Օրենսգրքի 305-րդ հոդվածի ուժով պետք է ճանաչվի անվավեր,* Սահմանադրական դատարանը հայտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքները ծագում են դրանց գրանցման պահից: Օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները, ***այդ իրավունքների սահմանափակումները***, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է.

«Պետական գրանցման հիմնական սկզբունքներն ու խնդիրներն են՝

1) պետության կողմից գույքի նկատմամբ գրանցված իրավունքների, սահմանափակումների **ճանաչումը, երաշխավորումը և պաշտպանությունը**.

2) գույքի նկատմամբ իրավունքների, սահմանափակումների, գույքի կադաստրային գնահատման, հաշվառման տվյալների վերաբերյալ տեղեկատվական համակարգի ստեղծումը և կառավարումը.

3) գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների, սահմանափակումների վերաբերյալ տվյալների մատչելիության, օբյեկտիվության, անընդհատության և միասնականության ապահովումը.

4) անշարժ գույքի շուկայի կայացմանն աջակցությունը»:

Նույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ուժով սահմանափակումների պետական գրանցման համար հիմք են, ի թիվս այլնի, սահմանափակում կիրառող իրավասու մարմինների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կայացրած **դատական ակտերը և որոշումները**:

Նույն օրենքի 18-րդ հոդվածը, որպես ընդհանուր կանոնից բացառություն, սահմանում է գույքի նկատմամբ այն իրավունքները և սահմանափակումները, որոնք ծագում են օրենքի հիման վրա և ունեն իրավաբանական ուժ՝ անկախ պետական գրանցումից:

Վերոշարադրյալի համակարգային վերլուծության ներքո՝ Սահմանադրական դատարանը հայտնում է, որ քաղաքացիական իրավունքների սահմանափակմանն առնչվող իրավահարաբերությունների (տվյալ դեպքում՝ սեփականության իրավունքով պատկանող գույքը տնօրինելու) առանձնահատկություններից մեկն այն է, որ դրանց ծագման համար **իրավաբանական փաստը** համապատասխան **իրավունքի սահմանափակման պետական գրանցումն է**, որի համար, ի թիվս այլնի, հիմք է հանդիսանում դատական ակտը: Այլ կերպ ասած՝ իրավունքի սահմանափակման ծագման իրավական հիմքի առկայությունն ինքնին դեռ չի նշանակում, որ սահմանափակումը համարվում է իրավաբանորեն ծագած. ***դրա ծագման պահը պայմանավորված է օրենքով սահմանված կարգով պետական գրանցման իրականացմամբ*** *(Քաղաքացիական* իրավունքների ու

պարտականությունների *«ծագման հիմքերի» և «ծագման պահի»* տարանջատման հարցերի վերաբերյալ Սահմանադրական դատարանի իրավական դիքորոշումներն արտահայտված են 04.03.2011 թ. ՍԴՈ-944 որոշման մեջ):

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ գույքի նկատմամբ գրանցված իրավունքները և սահմանափակումներն **ունեն իրավաբանական ուժ**, իսկ բոլոր սուբյեկտները **համարվում են տեղեկացված դրանց գրանցման մասին** անկախ այն հանգամանքից, թե իրականում տեղյակ են այդ մասին, թե ոչ: Իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում գրառված տեղեկությունները համարվում են ճիշտ և ունեն **ապացուցողական ուժ** այնքան ժամանակ, քանի դեռ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դրանք չեն ճանաչվել ուժը կորցրած, անվավեր կամ առոչինչ:

Սահմանադրական դատարանը 11.10.2013 թ. ՍԴՈ-1120 որոշմամբ նշել է, որ *գույքի նկատմամբ գրանցված **իրավունքների և սահմանափակումների մասին տեղեկացված լինելու կանխավարկածը** չի ներառում գույքի նկատմամբ իրավունքների գրանցման համար իրավական հիմք հանդիսացած և երրորդ անձի իրավունքներին անմիջականորեն առնչվող **դատական ակտերի գոյության մասին տեղեկացված լինելու կանխավարկածը** և չի հանդիսանում գույքի նկատմամբ իրավունքների գրանցման համար իրավական հիմք հանդիսացած դատական ակտի բողոքարկման համար դատավարական օրենսգրքերով սահմանված ժամկետների հաշվարկման հիմք:*

Միաժամանակ վերոգրյալ մեկնաբանությունը որևէ կերպ չի հակասում օրինական ուժի մեջ մտած **դատական ակտի պարտադիրության սկզբունքին**: Դատական ակտի պարտադիրությունը և իրավունքի սահմանափակման՝ օրենքով նախատեսված կարգով ծագման պահը տարբեր իրավական կատեգորիաներ են, որոնք կարգավորում են իրավական հարաբերությունների տարբեր կողմեր: Դատական ակտի պարտադիրության սկզբունքը ենթադրում է դրա կատարման և դրանում ամրագրված իրավական հետևանքների ապահովման պարտականություն, մինչդեռ պետական գրանցման պահանջը սահմանում է **այն իրավական պահը,**

որից համապատասխան սահմանափակումը համարվում է ծագած՝ տվյալ իրավունքի նկատմամբ իրավական հետևանքներ առաջացնելու իմաստով:

Այսպիսով, օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրության սկզբունքը չի բացառում օրենքով նախատեսված քաղաքացիական իրավունքների սահմանափակման պետական գրանցման պահանջի կիրառումը, եթե տվյալ սահմանափակման ծագման համար օրենսդրությամբ այդպիսի պահանջ սահմանված է: Ընդհակառակը՝ դատական ակտի կատարումը և դրա հիման վրա ծագող իրավական հետևանքների **պատշաճ ձևակերպումը** պետք է իրականացվեն համապատասխան իրավակարգավորմամբ սահմանված ընթացակարգերի պահպանմամբ: Հետևաբար՝ պետական գրանցման՝ **որպես իրավունքի սահմանափակման ծագման պահը որոշող իրավաբանական փաստի ճանաչումը** ոչ թե նսեմացնում կամ ժխտում է դատական ակտի պարտադիրությունը, այլ ապահովում է դատական ակտի կատարման և դրանից բխող իրավական հետևանքների առաջացման միջև օրենսդրորեն սահմանված կապի ճիշտ ընկալումը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ սույն **անհատական դիմումն ակնհայտ անհիմն է,** ուստի՝ սույն գործի վարույթը **ենթակա է կարճման՝** Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հիմքով՝ *հաշվի առնելով Սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները:*

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 69-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

«Ալեքսանդր Վորոնինի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

10 նոյեմբերի 2026 թվականի
ՍԴԱՈ-241